ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

14 ՀՈՒՆԻՍԻ, 2018 թ.
№ 9 (1026)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԼԵՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանում մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների մասնագիտական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերմանը, իսկ մշակութային մասնագիտություններ ընտրած ուսանողների համար նաև ստեղծվում է յուրահատուկ մշակութային միջավայր: Ասվածի վկայությունն արդեն ավանդույթ դարձած ամենամյա միջազգային նկարչական պլեների կազմակերպումն է: Տարբեր երկրների, այդ թվում և մեր համալսարանի 17 նկարիչներ 11-օրյա պլեների ընթացքում Մանկավարժական համալսարանի հարկի ներքո ոչ միայն փոխադարձ շփումների հնարավորություն կունենան, այլև կաշխատեն ուսանողների հետ՝ մշակութային յուրահատուկ միջավայրում փոխանցելով իրենց մասնագիտական հմտությունները:

Այս տարի գեղանկարիչների միջազգային պլեները նվիրված է Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին:

Հունիսի 11-ին տեղի ունեցավ պլեների բացման հանդիսավոր արարողությունը: Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից, Լեհաստանից, Մերձբալթյան երկրներից եկած նկարիչներին ողջունեց համալսարանի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը:

«Այս պլեները ձեզ համար լավ հնարավորություն է ծանոթանալու մեր փոքր, բայց գեղեցիկ երկրին ու նրա բնաշխարհին, նաև կկարողանաք համատեղ աշխատել մշակութային միջավայրում, միմյանց փոխանցելով ձեր փորձն ու հմտությունները»,-ասաց ռեկտորը, ապա ներկաներին ծանոթացրեց բուհի պատմությանը, ավանդույթներին ու մասնագիտություններին:

➤2

ՔԱՆԱՃՐՔԱՆ





Նոր համագործակցություն

«Չտեսնող, չլսողների աջակցության հիմնադրամ»-ի (Фонд поддержки слепоглухих «Соединение») պատվիրակությունը Մանկավարժական համալսարանում էր հիմնադրամի նախագահ Դմիտրի Պալիկանովի գլխավորությամբ: Մանկավարժական համալսարանի և հիմնադրամի միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որը հնարավորություն է ընձեռում երկու կառույցներին՝ համագործակցել դասախոս-մասնագետների փոխանակային ծրագրերի, օնլայն դասընթացների, ոլորտի մասնագետների դասախոսությունների, հետագայում նաև լաբորատորիա կամ աջակցության կենտրոն ստեղծելու շրջանակներում: Երկու կառույցները կհամագործակցեն նաև նորարարական, ախտորոշիչ, հոգեբանակավարժական ծրագրեր և տեխնոլոգիաներ, հոգեբանական և մանկավարժական օժանդակության տրամադրման ժամանակակից ձևեր և մոդելներ մշակելու հարցերում, ինչպես նաև լսողության և տեսողության խանգարումների ու բազմազավակ հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքներին աջակցության տրամադրման շրջանակներում:

Վերոհիշյալ հարցերի շուրջ խոսեցին հիմնադրամի և ՀՊՄՀ-ի ներկայացուցիչները՝ քննարկելով հետագա համագործակցության ուղղություններն ու ձևերը:

Դմիտրի Պոլիկանովը վստահ է, որ Մանկավարժական համալսարանի հետ համագործակցությունը դինամիկ և արդյունավետ կիրականացվի: Հիմնադրամի նախագահը ներկայացրեց իրենց ծրագրերն ու նախանշած ուղղությունները, որոնց շուրջ հնարավոր է համագործակցել, ապա խոսեց ուսանողների և դասախոսների փոխանակային ծրագրերի, նաև իրենց արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության մասին:

Հիմնադրամի ներկայացուցիչներին հյուրընկալեց նաև բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Ռեկտորը ներկայացրեց համալսարանի միջազգային համագործակցությունը՝ հույս հայտնելով, որ նոր սկիզբ առնող գործընկերությունը ևս կնպաստի հատուկ կրթության ոլորտի մասնագետների առաջընթացին:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նկատեց, որ համագործակցությունը սկսվել է հիմնադրամի կազմակերպած ամենամյա գիտաժողովներից. «Հայաստանն առաջին երկիրն է, ում հետ տվյալ հիմնադրամը համագործակցում է: Քննարկել ենք չտեսնողների և չլսողների բազմակի խանգարումների շուրջ երկուստեք հետաքրքրող հարցերն ու խնդիրները: Պետք է ասել, որ ոլորտի խնդիրներն այսօր ՀՀ-ում քիչ են լուսաբանված և ուսումնասիրված, իսկ սա լավագույն հնարավորություններից է. քննարկել և վեր հանել ոլորտի խնդիրները, մասնագիտական փորձի փոխանակում իրականացնելով՝ հասնել դրանց լուծմանը»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ...

➢1 Պրոֆեսոր Ռ. Միրզախանյանը խոսեց բուհի ուսանողակենտրոն գործունեության մասին, ընդգծեց, որ ամեն ինչ արվում է ուսանողի համար, երբեմն նույնիսկ փոքր-ինչ անհարմարություններ ստեղծելով դասախոսների գործունեության համար:

Ռեկտորը խոսեց հանրապետության համար մանկավարժական բարձրակարգ կադրեր պատրաստող բուհի առաքելության, ինչպես նաև մշակութային 16 մասնագիտությունների ուղղությամբ շրջանավարտներ թողարկելու մասին՝ ընդգծելով խորեոգրաֆիայի մասնագետներ պատրաստելու բուհի մենաշնորհը:

Ելույթ ունեցավ պլեների նախաձեռնողն ու կազմակերպիչը՝ գեղանկարիչ Փարավոն Միրզոյանը: Վերջինս իր գոհունակությունը հայտնեց ռեկտորին՝ պլեներին աջակցելու համար, և ընդգծեց նման ձևաչափով ձեռնարկների կարևորությունն ու կազմակերպելու բարդությունները:

Պլեների աշխատանքներին այս տարի մասնակցում են Ռուսաստանից Պոլինա Վերշինինան և Մանվել Մադոյանը, Լատվիայից՝ Մարա Բրիսկան, Լիտվայից՝ Իլոնա Յանուլիենեն, Եվա Պոլկեն, Գինտոտաս Վաիցիսը, Լեհաստանից՝ Գագիկ Պարսամյանը, Ռիսարդ Կովալևսկին, Ալիսիա Կովալևսկին և Ելենա Չիմելովիչը, Վրաստանից՝ Դավիթ Կվանտալիանին, Մադոնա Մենտեշաշվիլին և Մարինա Խաչատուրովան, Հայաստանը ներկայացնում են Ազգային պատկերասրահից Գարի Փրվեյանը, Գեղարվեստի ակադեմիայից՝ Փարավոն Միրզոյանը, Մանկավարժական համալսարանից Ֆաենբերգ Սարգսյանը և Լեմս Ներսիսյանը:

Տարբեր երկրներից եկած նկարիչները ներկայացրին իրենց երկրները և խոսեցին Հայաստանից ստացած առաջին տպավորությունների մասին:

Հյուրերին ողջունեց և արդյունավետ աշխատանք մաղթեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը:

Միջազգային պլեների ընթացքում հյուրերը տեղում կծանոթանան Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գործընթացներին ու մասնագիտական առանձնահատկություններին, կանցկացնեն վարպետության դասեր, կայցելեն նաև Հայաստանի պատմամշակութային վայրեր:

Պլեները կամփոփվի հունիսի 22-ին Հայաստանի ազգային պատկերասրահում՝ նկարիչների ստեղծած լավագույն աշխատանքների ցուցադրությամբ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Օրերս համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետը հյուրընկալել էր Ֆրանսիայից ժամանած լոգոպեդներ Աստղիկ և Սիլվի Թոփուզխանյաններին:

Գիտագործնական սեմինարի կազմակերպման նպատակն էր բուհի և այլ հաստատությունների լոգոպեդներին և Երևան քաղաքի տարբեր կլինիկաներում աշխատող նյարդաբաններին ծանոթացնել խոսքի խանգարումներով ուղեկցվող մի շարք նյարդային հիվանդությունների դեպքում լոգոպեդական աշխատանքի մեթոդներին, դրանց կազմակերպման առանձնահատկություններին: Հյուրերը առավել մանրամասն ներկայացրին նյարդային տարբեր հիվանդությունների դեպքում մեծահասակների հետ կիրառվող լոգոպեդական աշխատանքի սկզբունքները, որից հետո տեղի ունեցավ ակտիվ քննարկում:

Քննարկման ընթացքում հյուրերը խոսեցին ինսուլտներից, գանգուղեղային վնասվածքներից և գլխուղեղի բորբոքային հիվանդություններից հետո իրականացվող լոգոպեդական աշխատանքի սկզբունքների մասին: Մասնակիցներին հետաքրքիր էին Ֆրանսիայում աֆազիայի և դիզարտրիայի բուժման ընդունված մեթոդները: Ֆրանսահայ մասնագետները ներկայացրին դիսֆագիայի բուժման համար իրենց կողմից կիրառվող մեթոդը, ինչպես նաև նեյրոդեգեներատիվ հիվանդությունների դեպքում կիրառվող խոսքի վերականգնման սկզբունքները:

Աստղիկ և Սիլվի Թոփուզխանյաններն անդրադարձան նաև Պարկինսոնիզմին, Ալցհեյմերի հիվանդությանը, ցրված սկլերոզի և ամիոտրոֆիկ կողմնային սկլերոզի դեպքում լոգոպեդական աշխատանքների առանձնահատկություններին, որոնք կիրառվում են ֆրանսիական կլինիկաներում և վերականգնողական կենտրոններում:

Ապագա մանկավարժների քարոզները

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվեց ամենամյա քարոզ-մրցույթը՝ նվիրված երեխաների իրավունքների պաշտպանության օրվան:

«Յուրաքանչյուր երեխա ապրելու իրավունք ունի» խորագրի շուրջ Սկզբնական կրթության և Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետների շուրջ 17 ուսանողներ երեխաների իրավունքների վերաբերյալ ներկայացրել էին իրենց խոհ-քարոզները:

«Մեզնից շատերն աշխատում են երեխաների հետ և կոչված են պաշտպանելու նրանց իրավունքները, մարդիկ էլ կան, որոնք հետագայում կոչված կլինեն պաշտպանելու երեխաների իրավունքները, և կարծում եմ այդ գործունեությունը նրանց համար կդառնա մանկավարժական դավանանք, կրեդո: Դրա համար սա իսկապես մեր բոլորի տոնն է,-ասաց մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ Սիդա Թոփուզյանը ավանդույթ դարձած հերթական քարոզ-մրցույթի բացման խոսքում:- Համալսարանում ավանդույթ ենք դարձրել ամեն տարի անցկացնել այսպիսի միջոցառում և տարբեր խորագրերի ներքո լսել ուսանողների զեկուցում-քարոզները: Ես ուզում եմ ձեզ վստահեցնել, որ այս քարոզ-մրցույթը ոչ թե խաղ է, այլ ինտերակտիվ մեթոդ, որովհետև դուք միայն լսող չեք, դուք միջոցառման սուբյեկտներից մեկն եք: Ի՞նչ է տալիս ձեզ այս միջոցառումը. դուք ունենում եք ազատ կարծիք ունենալու և այն ազատորեն արտահայտելու հնարավորություն, գնահատելու ընկերոջ աշխատանքը, մաքուր հայերենով խոսել, հանդես գալ լսարանի առջև, սովորել և գնահատել տվյալ լսարանի առանձնահատկությունները»:

Այս անգամ քարոզի թեման էր՝ «Յուրաքանչյուր երեխա ապրելու իրավունք ունի»:

Լավագույն քարոզները համապատասխանաբար գնահատվեցին տարբեր անվանակարգերում: Կազմակերպիչները մրցանակային տեղեր ու մրցանակներ էին նախատեսել հռետորական արվեստով, լսարանը հուզելու կարողությամբ, լսարանի հմայքին արժանանացած ուսանողների համար: Ժյուրին էլ պետք է որոշեր առաջին 3 լավագույն քարոզները:

Ապագա մանկավարժներն ընդգծեցին, որ աշխարհն արդեն իսկ ընդունել է՝ երեխան ունի ապրելու իրավունք, սակայն ծնվել և գոյություն ունենալ՝ դեռ ապրել չէ: Երեխաները նման են սերմի, որն ընկնում է հողում. նրանք ծլարձակելու և պտուղ տալու բոլոր հնարավորություններն ունեն, պետք չէ զրկել նրանց այդ իրավունքից:

Օրվա թեման ներկայացնող ուսանողների զեկուցում-քարոզներում հիմնական ասելիքը երեխաների հանդեպ սիրո անհրաժեշտության և նրա բացակայության անդառնալի հետևանքների մասին էր: Պետք է օգնել երեխաներին, որ կարողանան հաղթահարել կյանքի դժվարությունները, սովորեցնեն ճիշտ ապրել, չմոռանալով նաև, որ «ամենամեծ ուսուցիչը կյանքն է»:

Իսկ խոսքը գործի վերածելու ճանապարհին նրանք կոչ արին սկսել ամենակարևորներից՝ օգնել երեխաներին, որ նրանք նմանվեն ոչ թե մեծերին, այլ հենց իրենց, իմանալ իրավունքներն ու չմոռանալ պարտականությունները, վայելել ներկան և պատրաստել ապագային:

Մրցույթի ավարտին ժյուրին «Ամենահուզիչ քարոզ» անվանակարգում ընտրեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 1-ին կուրսի մագիստրոս Մերի Դալլաքյանի, «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգում՝ նույն ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Ավետիսյանի աշխատանքները, իսկ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից «Ամենաբարի քարոզ» անվանակարգում հաղթող ճանաչվեց Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոս Նելլի Քոչինյանը:

Մրցույթում մրցանակային 1-ին տեղը թափուր մնաց, իսկ 2-րդ և 3-րդ տեղերում ընտրվեցին Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհիներ Անի Սարգսյանի և Էմմա Սարգսյանի աշխատանքները:

Պաշտպանություն համաղեկավարությամբ

Մանկավարժական համալսարանի «Սոցիոլոգիա» մասնագիտությամբ մագիստրոս Արփի Մխեյանը երկու գիտական ղեկավարի համաղեկավարությամբ պաշտպանել է մագիստրոսական թեզ: Այդ մասնագիտության գծով սա առաջին պաշտպանությունն էր:

Մանկավարժականից աշխատանքը ղեկավարում էր Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Սահակյանը, իսկ մյուս կողմից՝ Չերեպովեցի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ Տատյանա Գուժավինան:

Նշենք, որ մագիստրոսն իր աշխատանքում անդրադարձել է մեր իրականության մեջ կարևորագույն հարցին՝ սոցիալ-քաղաքական շարժումներին երիտասարդների մասնակցությանը:

Աշխատանքը ներկայացվել է նոր պայմաններով՝ հայերենով և ռուսերեն ամփոփմամբ, հետազոտություններն իրականացվել են հայ և ռուս ուսանողների շրջանակներում, վերհանվել են նրանց տարբերություններն ու առանձնահատկությունները:

Պաշտպանությունն արժանացել է հանձնաժողովի գերազանց գնահատականին և տպագրության ներկայացվել «Научная мысль» և «Արահետ» գիտական ամսագրերում:

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Սահակյանի կարծիքով տարբեր երկրներից համաղեկավարությամբ թեզ պաշտպանելու այս օրինակը նախադեպ կլինի այլ ուսանողների համար և կնպաստի, որ ուսանողներն ընդլայնեն իրենց գիտական հետազոտությունների շրջանակը:

«Սոցիոլոգիա» մասնագիտությունը մեր երկրում այնքան էլ կայացած չէ, իսկ նման պաշտպանությունները թույլ կտան ծանոթանալ օտարերկրյա փորձին, սոցիոլոգիական դպրոցի ձեռքբերումներին»,-հավելեց պրոֆեսոր Սահակյանը:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՅԴ ԼՈՒՍԵՂԵՆ ՀՈՐՁԱՆՔԸ,ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ՊԱՐ...

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կայացավ Մանկավարժական համալսարանի պարարվեստի մանկավարժություն բաժնի շրջանավարտների հաշվետու համերգը:

2017-2018 թթ. ավարտական կուրսի ուսանողների՝ պարուսույց-մանկավարժների և բեմադրիչների նոր սերնդի մուտքը պրոֆեսիոնալ պարարվեստի աշխարհ այս տարի նշանավորվեց ամերիկյան «Քայլ առաջ», Մուհսին Մատիի «Հազար ու մի գիշեր» և Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» խորեոգրաֆիկ ներկայացումներով:

Պարային անսովոր, բայցև յուրատիպ լուծումներով ներկայացվեց դեպքերն ու իրադարձությունների կենտրոնը՝ ամերիկյան փողոցները, ուր ոճային պարողները փնտրում և գտնում են խմբի համար անչափ կարևոր պարողի: Բազմաշնորհ աղջիկը հայտնվում է սիրելի տղայի և եղբոր խաղի միջև, որն ավարտվում է պարի լեզվով համերաշխության և ընկերության հաղթանակով:

Պարարվեստի ապագա մանկավարժները յուրահատուկ լուծումներով ներկայացրին նաև Մուհսին Մատիի «Հազար ու մի գիշեր» խորեոգրաֆիկ ներկայացումը՝ անդրադարձ կատարելով արաբական աշխարհին նրա սովորություններին ու կոլորիտին:

Սերգեյ Փարաջանովը պարասերներին այս անգամ ներկայացավ կինոմատոգրոֆիայի գլուխգործոցներից «Նռան գույնով»՝ հագեցած հոգեբանական, ազգագրական հզոր լիցքերով: Հաջողվել էր պարային բեմադրության մեջ ևս հավատարիմ մնալ փարաջանովյան ձեռագրին և սիմվոլների վերլուծությամբ հասնել սիրո և հոգու ազատության:

Պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ Կարեն

Գևորգյանը բարձր գնահատեց շրջանավարտների և կուրսի ղեկավար, դոցենտ Գոհար Աբրահամյանի համատեղ աշխատանքը՝ ընդգծելով, որ շուրջ մեկ տարվա եռանդուն աշխատանքի արդյունքն այնքան մեծ է, որքան շռնդալից են այսօրվա հանդիսատեսի ծափողջույները:

«Աշխարհս մե փանջարա է (պատուհան). այս համերգը մի պատուհան է դեպի մեր ուսանողների վաղվա օրը, հայոց հոգին, Կոմիտասի աստվածային մեղեդին, Նարեկացու աղոթքներ, երազանքների բարձրագույն կետ: Այս լուսեղեն հորձանքը, որին ուսանողները կամովի են հանձնվել, կոչվում է պար»,-իր խոսքում նշեց Կարեն Գևորգյանն ու բարի երթ մաղթեց պարուսույցների նոր սերնդին:

Դոցենտ Գոհար Աբրահամյանը հուզված է և հպարտ. պարարվեստի անսահման աշխարհ ոտք են դնում նոր ու պրոֆեսիոնալ պարողներ, որոնք համերգին դրսևորեցին իրենց հոգու և ներաշխարհի արտացոլումը:

«Պատվիրում եմ ձեզ անաղարտ պահել պարարվեստի 3 կարևոր սկզբունքները՝ պարզությունը, ճշմարտացիությունը և բանականությունը: Ես կորցրեցի ձեզ այնտեղ, ուր դուք անէացաք ձեր և տիեզերքի, հոգու և բնության անսահմանության մեջ»,-հավելեց Գոհար Աբրահամյանը:

Նշենք, որ Պարարվեստի մանկավարժության ամփոփիչ ատեստավորման քննությունը գնահատում էր հանձնաժողովը՝ ՀՀ վաստակավոր գործիչ Մինաս Խաչատրյանի նախագահությամբ:

Համերգին ներկա էին բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, պարարվեստի ոլորտի ականավոր գործիչներ, արվեստասեր հյուրեր, բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մանուկների աշխարհում

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը յուրահատուկ ձևով նշվեց Մանկավարժական համալսարանում: Բուհի թանգարանն արդեն ձևավորված ավանդույթի համաձայն կազմակերպել էր օրվան նվիրված բազմաբովանդակ միջոցառում:

Ներկաներին թանգարանի պատմությանն ու ժամանակագրությանը ծանոթացրին հենց իրենք՝ երեխաները: Թանգարանում գործող «Պատանի էքսկուրսավար» խմբակի երեխաները այցելուներին պատմեցին և ներկայացրին թանգարանի ցուցանմուշները, բուհի պատմությունն ու ժամանակագրությունը:

Այնուհետև տոնական միջոցառումը շարունակվեց մատնանկարչությամբ. երեխաները կավե սալիկների, թղթերի վրա նկարեցին մատներով՝ իրենց նախընտրած թեմաներով:

Ամենակրտսեր մասնակիցը՝ 3-ամյա Էլինա Գարդյանը, հետաքրքրությամբ դիտեց թանգարանի ցուցանմուշները, իսկ այնուհետև մատնանկարչությամբ նկարազարդեց իր կավե աշխատանքը: «Առաջինն ինձ շնորհավորել է պապիկս և գեղեցիկ նվեր տվել, սակայն ես դեռ սպասում եմ, որ նվեր ստանամ իմ սիրելի մուտֆիլմի հերոսուհու տիկնիկը»,- ասաց Էլինան:

Ռաֆայել Մոմչյանը 9 տարեկան է, սովորում է ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում: Օրը սկսել է ուրախ ու տարբերվող, իսկ առաջինը օրվա առթիվ նրան շնորհավորել է մայրիկը:

«Մաղթում եմ, որ աշխարհի բոլոր մանուկներն առողջ ու երջանիկ լինեն՝ իրենց ծնողների հետ միասին, լինեն խելացի, լսեն ծնողներին, և տղաներն անպայման ծառայեն Հայոց բանակում»,- ասաց Ռաֆայելը: Իսկ ավելի անհոգ ապրելու համար նա վստահեցրեց. «Աշխարհի բոլոր բալիկներն էլ ավելի երջանիկ ու անհոգ կլինեն, եթե չլինեն պատերազմներ, իսկ բոլորս ապրենք խաղաղ հայրենիքում»:

Նա աշխարհի բոլոր մանուկներին մաղթեց ընկերասիրություն և առողջություն:

«Մանուկների այսօրվա աշխարհում պակասում է միայն խաղաղությունն ու երջանկությունը: Ցանկանում է, որ միշտ անամպ երկինք լինի, և մարդիկ ժպտան»,- ասաց ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցի աշակերտ Արամ Գումրիկյանը:

7-ամյա Էլինա Վարդազարյանը տոնին առանձնահատուկ է սպասում. չնայած նվերներ հաճախ է ստանում, բայց տիկնիկների համար փոքրիկ տնակին այսօր է սպասում:

Մեզ հետ զրույցում ընդգծեց՝ արդեն մեծ է և գիտի, որ սա երեխաների իրավունքների պաշտպանության օրն է. «Ուզում եմ, որ մենք խաղալու, մեր ցանկությամբ զբաղվելու իրավունքներ ավելի շատ ունենանք. հունիսի մեկը նաև երեխաների ազատության օրն է»:

Անդրադառնալով հունիսմեկյան ցանկություններին՝ Էլինան մաղթեց, որ բոլոր երեխաներն էլ ուրախ ու անմոռանալի օր ունենան, լավ նվերներ ստանան, հավատան հեքիաթներին, որոնք անպայման իրականություն են դառնում:

Երեխաների տոնական օրը շարունակվեց ուրախ երաժշտությամբ և հետարքիր խաղերով: Իսկ միջոցառմանը ներկա մեծահասակները նրանց մաղթեցին անամպ երկինք, անհոգ ու ապահով մանկություն, և որ իրականություն դառնան նրանց ամենահամարձակ երազանքները:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Ժամանակակից մեկնաբանությամբ

ՀՊՄՀ-ի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հագուստի մոդելավորման բաժնի ուսանողներն իրենց ավարտական որակավորման քննությունները հանձնեցին յուրօրինակ ցուցադրությամբ:

Բակալավրատի 26 ուսանող ցուցադրության էր ներկայացրել նվազագույնը 3 աշխատանք, որոնցում ներկայացրել էին հագուստի մոդելավորող դառնալու ճանապարհին ձեռք բերած գիտելիքները, տարբեր գործվածքների հետ աշխատելու հմտությունները, ոճային առանձնահատկությունները:

Հագուստների հավաքածուներում ուսանողներն հիմնական շեշտը դրել էին ազգայինի վրա՝ ժամանակակից մեկնաբանությամբ ու լուծումներով: Հատկանշական է, որ դրանք ցուցադրում էին հիմնականում ուսանողները՝ հագուստների հեղինակները կամ որպես մոդելներ հանդես էին գալիս բուհի պարարվեստի մանկավարժության բաժնի ուսանողները:

Հագուստների ստեղծման գործում ապագա դիզայներներն ու հագուստի մոդելավորողները կիրառել էին գոբելենի, կարպետի, ասեղնագործության տարրեր, հաջողությամբ դրանք համադրել տարատեսակ կտորների և գործվածքների հետ:

Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի վարիչ Անուշ Եղիազարյանն ընդգծեց, որ այս տարվա շրջանավարտները տարբերվում էին իրենց համարձակությամբ: «Հագուստի մոդելավորող դառնալու ճանապարհին շատ կարևոր է, թե ուսանողները մասնագիտական ինչ մթնոլորտում են աշխատում: Մեծ ձեռքբերում է, երբ ուսանողները հնարավորություն ունեն իրենց հավաքածուները ցուցադրել պոդիումում. սա վկայում է բուհի՝ մասնագիտության հանդեպ լուրջ մոտեցման և վերաբերմունքի մասին»,-ասաց Ա. Եղիազարյանն ու հավելեց, որ սա ուսանողների և իր, դասախոսներ Լիլիթ Մելիքյանի, Մարինա Վանյանի և Արամ Նիկոլյանի հետ համատեղ մեկ տարվա աշխատանքի արդյունք է:

Ամբիոնի վարիչը հավելեց, որ ցուցադրությանը հաջորդում է նաև բանավոր քննությունը. ուսանողներն իրենց հավաքածուները ներկայացնում են տեսականորեն՝ սկսած հագուստի ստեղծման պատմությունից ու ոգեշնչումից մինչև տեխնիկայի, գործվածքի ընտրություն:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ամենաբարդը մարդ նկարելն է

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի նախասրահը մեկ շաբաթ է զարդարում են կերպարվեստի բաժնի մագիստրոսների գրաֆիկական աշխատանքները: Ցուցահանդեսի նախաձեռնողն ու ղեկավարը մանկավարժական գիտությունների թեկնածու, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Արտաշես Քեշիշյանն է, ում սաները՝ մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները ներկայացրել էին 45 աշխատանք: Այդ աշխատանքներում նրանք վերարտադրել էին հիմնականում բնորդների՝ իրենց անատոմիական ճշգրտությամբ, կերպարի էությամբ ու բնավորությամբ:

Շնորհավորելով ուսանողներին՝ ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը նկատեց, որ կան շատ պրոֆեսիոնալ, թեմատիկ կոմպոզիցիոն աշխատանքներ, որոնք փաստում են մագիստրոսների արդեն իսկ լուրջ քայլը դեպի արվեստի խոր ու բարդ աշխարհ:

«Այս ցուցասրահում բազմիցս կազմակերպել ենք ցուցահանդեսներ, սակայն սա յուրահատուկ է: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ակադեմիական ռեալիստական գիտելիքների վրա, որն արտահայտվել է այստեղ ցուցադրված յուրաքանչյուր նկարում: Վերածննդի ժամանակաշրջանում ինքնահաստատման մի քայլ է եղել, երբ արվեստանոցներում հայտնի վարպետներն իրենց սաներին սովորեցրել են դիմանակար անել: Դիմանկարով պետք է հաստատվեր նկարչի էությունը»,-ասաց Արա Հակոբյանը: Դեկանը հորդորեց ուսանողներին՝ չբավարարվել այսքանով, ավելի շատ աշխատել, որ տեսանելի լինեն պտուղները:

Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Արտաշես Քեշիշյանը ուսանողների այս ցուցադրությունը բարձր գնահատեց՝ ասելով, որ ուսանողներին հաջողվել է աշխատանքներում արտահայտել իրենց գիտելիքները, հմտություններն ու կարողությունները:

«Ցուցահանդես կազմակերպելը դժվար ու պատասխանատու է, սակայն կրկնակի դժվար է, երբ այն հաշվետու է. այստեղ ուսանողները ցույց են տվել իրենց ողջ գիտելիքները, որոնք ձեռք են բերել ուսումնառության ընթացքում: Մեր համատեղ աշխատանքը խարսխվել է փոխադարձ հարգանքի և սիրո վրա, և հույս ունեմ, որ այս ուսանողները հետագայում կշարունակեն զբաղվել ստեղծագործական, գիտական, մանկավարժական աշխատանքով: Նրանք պարտավոր են այս գիտելիքները փոխանցել հետագա սերունդներին»,- ասաց Արտաշես Քեշիշյանը:

«Այսօրվա ցուցահանդեսն իր էությամբ ու բովանդակությամբ առանձնանում է մյուսներից. այստեղ ներկայացված աշխատանքները միայն առաջադրանքներ չեն, նկատելի է, որ ուսանողները կոմպոզիցոն մտածողություն են հանդես բերել, նկարներում առաջադրանքը և ստեղծագործությունը միահյուսված են: Ոգևորված եմ, որովհետև սրանք ակադեմիական հիմքի վրա ստեղծված աշխատանքներ են, ինչն արժանի է գովեստի ու խրախուսանքի»,- ասաց կերպարվեստի ամբիոնի վարիչի տեղակալ, դոցենտ Միսաք Մելքոնյանը:

Կերպարվեստի բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Գագիկ Ավետիսյանը ցուցահանդեսում ներկայացրել է 5 աշխատանք: «Հիմնականում ներկայացրել եմ բնորդների՝ բարդ ֆիգուրներով: Կերպարվեստում ամենաբարդը մարդ նկարելն է՝ իր անատոմիական ճշգրտությամբ և բնավորությամբ»,- ամփոփեց Գագիկը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Ավարտական համերգ

Ավանդույթի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնը հանդես է գալիս հաշվետու համերգով: Այս տարվա համերգը կազմակերպիչները նվիրեցին մայիսյան հաղթանակներին:

Կատարումներով հանդես եկան ամբիոնի փողային, ազգային նվագարանների

նվագախմբերը, ջազ բենդը, քանոնահարների, դուդուկահարների, կլառնետահարների, դհոլահարների անսամբլները, նաև անհատ կատարողներ:

1-4-րդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ համերգին հնչեցին հայ և արտասահմանցի հայտնի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Երաժշտության ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը ընդգծեց, որ նման համերգները նպաստում են ազգային երաժշտության տարածմանը, քանի որ ողջ տարվա ընթացքում ուսանողները տարբեր ձևաչափերով համերգային ելույթներ են ունենում մարզերում՝ ներկայացնելով ազգային նվագարաններն ու փողային գործիքները, նաև՝ պետական մեծամասշտաբ միջոցառումներում:

«Սա ուսանողների առաջին կենդանի շփումն է իրական հանդիսատեսի հետ, ինչպես նաև անդրանիկ համերգը պրոֆեսիոնալ բեմում»,-ամփոփեց Արա Գևորգյանը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի ցուցասրահում բացվեց հերթական ցուցահանդեսը. այս անգամ այն նվիրված էր ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի դասախոս Վարդգես Գուլիկյանի հիշատակին: «Անավարտ ծաղիկներ» խորագիրը կրող ցուցահանդեսը խորհրդանշական էր. նկարչի մահվանից առաջ նկարված ծաղիկները, որոնք այդպես էլ մնացին անավարտ, այնպես, ինչպես

Անավարտ ծաղիկներ

ուսանողների և դասախոսի նպատակները՝ կապված ապագայի հետ:

Ցուցահանդեսին մասնակցում էին նկարչի ուսանողները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Բոլորը ներկայացրել էին այն աշխատանքները, որոնք կատարվել էին նկարչի կենդանության օրոք և գնահատվել էին նկարչի կողմից: Ցուցահանդեսին ներկա էին նաև նկարչի դուստրն ու տիկինը: Բացման խոսքով հանդես եկավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը, դիզայնի և դեկորատիվ կիրառական ամբիոնի վարիչ Անուշ Եղիազարյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ Կարեն Աղամյանը և այլն: Բոլորը ողջունեցին ուսանողների այս գեղեցիկ նախաձեռնությունը և ներկայացված նկարները բարձր գնահատեցին:

Ցուցահանդեսի մասնակից ուսանողները նշեցին, որ ցուցահանդեսը վաղուց էր նախատեսված. նրանք ծրագրել էին այն իրականացնել իրենց սիրած վարպետի՝ Գուլիկյանի հետ, բայց, ցավոք, այսօր դասախոսը նրանց կողքին չէ:

Սերգեյ Մերգելյան – 90



Երևանը դարձավ այդ ուղղությամբ ԽՍՀՄ կենտրոններից մեկը: Նա 1962-65 թթ. և 1971-79 թթ. ԳԱԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնի տնօրենն էր, 1971-74 թթ. միաժամանակ ԳԱԱ-ի փոխպրեզիդենտը: 1963-71 թթ. պաշտոնավարել է Մոսկվայում՝ որպես ԽՍՀՄ ԳԱ Մաթեմատիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ:

Վանաձորից հետո կրկին տեղափոխվել է Մոսկվա որպես Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

Մերգելյանը մեծ ավանդ ունի Հայաստանում մաթեմատիկայի գիտական դպրոցի ստեղծման, հաշվողական տեխնիկայի և կիբեռնետիկայի հիմնադրման ու զարգացման գործում: Նա 1952 թ. արժանացել ԽՍՀՄ պետական մրցանակի: 2008 թ. պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: Երկու անգամ (1959-63, 1971-75 թթ.) ընտրվել է ՀԽՍՀ գերագույն խորհրդի պատգամավոր:

2008 թ. Մերգելյանն ավարտել է իր երկրային կյանքը և բռնել հավերժի ճամփան:

Այս հրապարակումը, որպես մերգելյանական հուշերի սլացքի մի ակնթարթային կանգառ թող հավերժի բարձունքից մեկ անգամ էլ մեզ ներկայացնի անվանի գիտնականին ու նրա շարունակվող դասերը, քանզի մոռացումի փոշին իր ճանապարհից անվանի գիտնականը մաքրել էր դեռևս իր երկրային կյանքում: Հիմա հոբելյանական հավերժումի բարձունքում են նրա խոսքն ու գործը, գիտական նվաճումներով ծանրաբեռնված նրա դափնեպսակը, հավասարումներով և անհավասարումներով լի նրա մաթեմատիկան: Կարծում եմ ամենևին էլ պատահական չէ, որ Գնահատման և թեստավորման կենտրոնի մաթեմատիկայի 2018 թ. պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցի շապիկին հենց Սերգեյ Մերգելյանի նկարն է և համառոտ կենսագրությունը: Հոբելյանական այդ ուրվագիծը արժանի է ուշադրության և գնահատականի: Հուսով եմ, որ տարվա ընթացքում անց են կացվելու գիտնականի իննսունամյակին նվիրված, նրա անցած ճանապարհը լուսավորող բազմաբնույթ միջոցառումներ, ոչ առանց Լոռու և Վանաձորի:

Վաղարշակ ՂՈՐԽՄԱԶՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԴԱՍԵՐ

Դասախոսություններ շատ եմ լսել: Հետաքրքիր շատ հուշեր եմ պահպանում Երևանի մանկավարժական ինստիտուտի իմ դասախոսների՝ Ռիմա Սարգսյանի, Գուրգեն Ղուլղազարյանի, Յուրա Թադևոսյանի, Ալբերտ Օրդյանի, Գոհար Մանվելյանի, Էմիլ Աճեմյանի, Դավիթ Սահակյանի, Լևոն Գրիգորյանի և շատ ուրիշների մասին: Լսածս մի քանի դասախոսություն իմ հուշերում մնացել են անմոռաց ու առանձնացող: Դրանց թվում, անշուշտ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտի 1982-86 թթ. ռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մերգելյանի «Բարձրագույն մաթեմատիկայի տարրերը մաթեմատիկայի դպրոցական ծրագրերում» վերնագրով դասախոսությունն էր ուսուցիչների վերապատրաստման ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղում: Ահա անցել է 33 տարուց ավելի, բայց մաթեմատիկայի մասնագետ, արդեն երջանկահիշատակ իմ նախկին գործընկերոջ՝ Ռազմիկ Միքայելյանի հորդորով լսածս դասախոսության ոչ օրն եմ մոռանում (Մեծ հաղթանակի 40-ամյակի նախօրյակն էր), ոչ էլ անվանի գիտնականի խոսքը, որ ավելի շատ խորհուրդ էր՝ հասցեագրված ուսուցիչներին: Որպես ժողկրթբաժնի դպրոցական տեսուչ՝ ես շատ բան սովորեցի այդ մեկուկես ժամ տևած դասախոսությունից: Ամենակարևորը թերևս «Ինչպե՞ս վարվել երբ մաթեմատիկական սխալ է թույլ տվել ուսուցիչը» հարցմանը գիտնականի ժպիտով ընդգծվող կտրուկ ու սառը պատասխանն էր. «Սխալվել կարող է ամեն ոք, կարևոր է, որ մարդ ժամանակին գիտակցի իր սխալը, խոստովանի և ուղղի: Մաթեմատիկան ճշգրիտ գիտություն է, և սխալներ չի ընդունում, մասնագիտական լուրջ սխալը կարող է դառնալ կործանարար և սպանել երեխայի հետաքրքրությունը առարկայի նկատմամբ»:

Սերգեյ Նիկիտի Մերգելյանը ծնվել է Սիմֆերոպոլում 1928 թ. մայիսի 19-ին: 19 տարեկանում էքստեռն կարգով ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 21 տարեկանում դարձել է գիտությունների դոկտոր, 24 տարեկանում՝ պրոֆեսոր, 25 տարեկանում ընտրվել է ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱԱ թղթակից անդամ, 28 տարեկանում դարձել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Նա եղել է ԽՍՀՄ ԳԱԱ Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս անալիզի բաժնի հիմնադիր ղեկավարը: 1956 թ. Մերգելյանը Երևանում հիմնել է մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը և եղել առաջին տնօրենը: Դրանով Հայաստանում սկիզբ դրվեց ժամանակակից հաշվողական մեքենաների արտադրությանը:

Մերգելյանի կազմակերպչական տաղանդի շնորհիվ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Օրերս Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան այցելեցին հայ ժողովրդի արժանավոր զավակներ, Արևմտահայոց ազգային համագումար միջազգային ոչ կառավարական կազմակերպության նախագահ, անվանի զորական, Հայոց բանակի հիմնադիրներից գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը, նույն կազմակերպության փոխնախագահ, գաղափարական առաջնորդ Կարեն Միքայելյանը և միջազգային ճանաչում ունեցող նկարիչ, Մանկավարժական համալսարանի շրջանավարտ Արթուր Օշականցին:

Հյուրերը և գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը խոսեցին Արևմտահայոց ազգային համագումար կառույցի առջև դրված խնդիրների, Հայաստանում իրականացված հիրավի համաշխարհային նշանակության թավշյա հեղափոխության և դրա արդյունքում հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրներին կազմակերպության գործուն մասնակցության հարցերի շուրջ:

Տիգրան Պետրոսյանցը հյուրերին նվիրեց հայ գեներալներին նվիրված իր գրքի հայերեն և անգլերեն տարբերակները:

Տաթև ԵՆՈՔՅԱՆ

14 տարի՝ համալսարանի գրադարանում

Հունիսի 7-ին Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի աշխատակազմով նշեցին գրադարանի սպասարկման բաժնի գրադարանավար Անահիտ Փիլոյանի ծննդյան օրը: Այս տարի այն հոբելյանական էր արդեն 14 տարի բուհի գրադարանում բարեխղճորեն աշխատող Ա. Փիլոյանի համար: Աշխատանքային ընկերները նրան բնութագրում են որպես ազնիվ ու լավ մարդ, հավատարիմ ընկերուհի, շփվող ու հարմարվող յուրաքանչյուր տարիքի մարդու, առավել ևս՝ ուսանողների հետ:

Գովասանքի բազում խոսքեր հնչեցին հոբելյարի հասցեին. աշխատանքային ընկերները նրան բարեմաղթանքներ հղեցին՝ մաղթելով քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր աշխատանք, անձնական երջանկություն: Գրադարանի տնօրենն էլ լավ աշխատանքի և ծննդյան օրվա կապակցությամբ պարգևատրեց պատվոգրով:

Ուսանողի օրագրից

ԻՄ ՀՈԳՈՒ ԵՐԳԸ

Եթե ես Ձեզ պատմեմ, որ իմ արմատները հասնում են մեր էպոսի ակունքները, չեք հավատա կամ կզարմանաք:

Սանասարը և Բաղդասարը բերդ հիմնեցին ժայռակուռ հսկա քարերով ու Սասնա տուն՝ Սասուն կոչեցին: Մեծ պապիս գյուղն էլ Սասունում Դավթի բերդին մոտ է եղել, Սասնա գյուղերից ամենամոտը: Մեծ պապս՝ Ղուբոն, պատմում էր, երբ ոչխարի հոտը գյուղից սար էր բարձրանում՝ երկնքում արևն արդեն մեկ պարանաչափ (չվանաչափ) էր ծագել, իսկ հոտը արդեն հասել էր Դավթի բերդին: Իմ Ղուբո պապը, նրա Կարապետ պապը, նրանց ապուպապերը ու բոլոր նախնիները ծնվել են Արևմտյան Հայաստանի Աղձնիք նահանգի Սասուն գավառի Սասնաբերդին ամենամոտ գտնվող Հարկոռք գյուղում: Գյուղը, ըստ իմ պապիկի, Հարկոռք է կոչվել, որովհետև այտեղ է զոհվել Հայկ անունով մի զորական և այնտեղ էլ թաղվել. Հայկի գոռ (գոռ-գերեզման): Ի՞նչ իմանաս Հայկ նահապետն էր եղել Հարգորքի հիմնադիրը, թե էպոսի «ծռերից» մեկը: Կարող է պատահել, որ հավասար լինեն Հայկ Նահապետի և էպոսի տարիքները: Ո՞վ կարող է ժխտել կամ ինչու՞ չհաստատել, որ Հարկոռքն ու Հայկաձորը նույն տեղանունն են: Այո՛, իմ արմատները հասնում են մինչև Հայկաձոր, Հարկոռք, հասնում են մինչև Սասունցի Դավիթ, որովհետև պապս ու իր նախնիները չէին գաղթել այլ վայրերից, եկվոր չէին, այլ Աստծո կամ թե բնության արարչությամբ ի սկզբանե եղել են Սասուն, ուր ապրել են երկնքին կպած ամրակուռ ժայռոտ սարերում, անդնդախոր ձորերի կիրճերում, դարձել էպոսի ծուռ Սանասար, անհաղթ Դավիթ, կռել են իրենց թուր Կեծակին, որսի ելել Որսասար, հեծել Քուռկիկ Ջալալին ու, հարատևելով ժամանակի անվերջության մեջ, դարձել Արաբո, Գևորգ Չաուշ, Աղբյուր Սերոբ…

19-րդ դարի վերջին Հարկոռքը փոքր գյուղ է եղել, բնակեցված հայերով, ուր մի գերդաստան էր պապիս ընտանիքը: Երկրպագությունը հողի աշխատանքն էր, ապրելու իմաստը՝ Սասնաբերդի շենացումը, իսկ մտածողությունը՝ Անդրանիկի խոսքերով՝ Աստվածներից էլ բարձր: Արդար ու քաջակորով էին, ինչպես բերդի քարերն ու բերդագլխի երկինքը, մաքուր՝ ինչպես գլգիլ հացը: Սերնդեսերունդ սասունցիները անկախ գոյատևեցին, ձգեցին արմատները մինչև երկրի խորքերը, ճյուղեր տվեցին մինչև Ծովասարի ծաղիկները, պահպանելով իրենց լեզուն, հավատը, ավանդույթները, երգը, բառն ու բանը, մշտապես պայքար մղելով ազատության համար, հասան մինչև յաթաղան, արմատազարկ սև յաթաղան…

Պապիս հիշողությունները. իր երկու եղբայրները՝ Հակոբն ու Ջամիլը թաղված են գյուղի մոտակայքում գտնվող եկեղեցու սալաքարերի տակ: Իսկ մինչև իր մահը պապիս ականջներում որպես ցավի մորմոք լսվում էր գաղթի ճանապարհին մնացած մոր ձայնը: Պապս ու իր քույրը եղեռնազարկ գաղթականների հետ հասան Արևելյան Հայաստանի Արագածոտն գավառ և Սասունի մյուս գյուղերից՝ Ռաբաթից, Բերմից, Բացից, Արխունդից, Քիշանքից փրկվածների հետ բնակություն հաստատեցին Արագածի փեշերին գտնվող, նախկինում Այնալու, այժմ Դավթաշեն (Դավթի շեն) կոչվող գյուղում: Ու ծնվեցին նոր գյուղեր՝ Կաթնաղբյուր, Սասնաշեն, Բազմաբերդ: Այո՛, արմատներ ձգեցին, շենացրին: Արդյոք կորսվե՞ց հազարամյա Սասունի հողում ծլարձակած արմատը. ո՛չ, որովհետև Սասունից գաղթած և Արագած լեռան փեշերին ապրած իմ պապերի հայացքը Հայկական պարից անդին էր, կարոտաբաղձ երգը հասնում էր նրանց ավերված տները, իսկ վերադառնալու, վերահաստատվելու հույսն ու կամքը ծնվում էր ամեն սերնդի հետ, ծնվել և ապրում է նաև իմ մեջ:

Ես իմ պապ Ղուբոյի երրորդ սերունդն եմ, նրա Գևորգ որդու՝ Հակոբի դուստրը: Իմ հոգու երգը պապերիս տունդարձի ցավի մրմուռն է, իմ խիղճը անթաղ դիակների մոխիրներից հառած բրաբիոն ծաղիկն է, իսկ իմ արյունը Սասունում արարված սասունցու արմատն է: Դե հիմա ասե՛ք, որտեղի՞ց են գալիս իմ արմատները: Պապս ունեցավ ութ զավակ, նրա զավակներն ու թոռները մեծացան, արմատներ գցեցին մի միջավայրում, որտեղ մանկանց օրորոցի երգը ֆիդայիների երդումն էր, մանկական խաղերը Սասնա Դավթի գուրզ զարկելն էր, իսկ հեքիաթները մեր էպոսի պառավի արտի, թլոր Դավթի ու Ագռավաքարի ասքերն էին:

Ֆիդայական երգերը, Սասունի պարերը, էպոսի բարբառը այժմ էլ սասունցիներով բնակեցված գյուղերում չեն սովորեցում. դրանք ծնվում են մեզ հետ:

Ես գիտեմ՝ գաղթի ճամփաներում պահպանվել է մի արահետ, ուր դեռ ոչ ոք չի տրորել իմ պապերի ոտնահետքերը, իսկ այդ ոտնահետքերի հետ ձգվելով մեզ է հասել այն կենաց արմատը, որն աճեց, բազմացավ Արագածի փեշերին: Չտրորված այդ արահետն ապրում է իմ մեջ, ապրում է քո մեջ: Այդ անապական մնացած արահետը մեր Սասնաբերդի Սասնա սյուներն են, որոնք թեքվել, բայց դեռ կանգուն են: Կգա օրը ետդարձի, պապիս ոտնահետքերով իմ ոտքերն են քայլելու դեպի Սասուն: Ու թե դաշն են Աստված, երկինք ու երկիր, պիտի երթանք, պիտի երթանք մեր երկիր:

Լուիզա ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Մշակութաբանություն, 2-րդ կուրս

Լույս է տեսել «Մանկավարժական առողջագիտությունը տարրական դպրոցում» ուսումնամեթոդական ձեռնարկը մանկավարժների և ծնողների համար:

Ուսումնական ձեռնարկում «Առողջությունն» ու «Առողջ ապրելակերպը» դիտարկվում են որպես մանկավարժական արժեքներ, առողջագիտական (վալեոլոգիական) սկզբունքները մեկնաբանված են հումանիստական դաստիարակության հարացույցի տեսանկյունից, տրվում են առողջագիտական դասերի պլաններ, կոնկրետ երաշխավորություններով և խորհուրդներով: Ներկայացված են դպրոցի առողջագիտական ծառայության կառավարման և գործունեության մոդել, ուսուցիչների շրջանում կատարված սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքներ, հեղինակային խմբի անդամների պատասխանները ծնողներին և ուսուցիչներին հետաքրքրող հարցերին, նկարագրված են առողջագիտական դաստիարակության իրականացման առաջավոր տեխնոլոգիաներ և մեթոդներ: Ուսումնական ձեռնարկում քննարկվող բոլոր հարցերը դիտարկվում են ուսուցիչ-ծնող համագործակցության համատեքստում: Այն, ինչ սկսվում է տանը՝ շարունակվում է դասարանում: Ուսումնական ձեռնարկում շրջանառության մեջ է դրվում մանկավարժական մի նոր հասկացություն՝ «Մանկավարժական համատեղելիություն»:

Ուսումնական ձեռնարկը հասցեագրված է մանկավարժներին, տարրական դպրոցում սովորողների ծնողներին, ապագա ուսուցիչներին, դպրոցական ներկա և ապագա առողջագետներին: Այն կարող է օգտակար լինել կրթության համակարգի պրակտիկ աշխատողներին, «Մանկավարժական առողջագիտություն» առարկան դասավանդող դասախոսներին և այն ուսումնասիրող ուսանողներին՝ մանկավարժական կադրերի վերապատրաստման և երեխաների առողջագիտական հարցերով զբաղվող մասնագետներին:

Հայրենասիրական ձեռնարկ

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնում անցկացվեց Սարդարապատի պանծալի հաղթանակի 100-ամյակին նվիրված ձեռնարկ: Պատմական ակնարկից և Սարդարապատին նվիրված հուշարձանները լուսաբանող դասախոսությունն ուղեկցվեց ելույթներով:

Ամբիոնի ուսանողությանը նախապես հայտարարված «Իմ ակունքները» խորագրով լավագույն հոդվածի մրցույթին ներկայացված աշխատանքներից տասնչորսը տպագրվեցին ամբիոնի կողմից հրատարակված ժողովածուում, որը ցերեկույթի վերջում բաժանվեց մասնակիցներին:

Միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրին իրենց հոդվածները՝ համապատասխան տեսանյութերով:

Ազատագրական երգերով հանդես եկան վերջերս ՀՊՄՀ-ում անցկացված երգի մրցույթում հաղթած առաջին և երրորդ կուրսի ուսանողուհիներ Ռուզան Ղարաջյանը (1-ին մրցանակ) և Լիլիթ Հարությունյանը (2-րդ մրցանակ): Երգերն ու ընթերցումները մշակութաբանության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի, ասմունքող Մարինե Աբրահամյանը համեմում էր ավանդական հայ ընտանիքի մասին հայ մտավորականների խոսքերով:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ

Առաջին անգամ մայրենի լեզվով լույս տեսնող «Տեսողության օրգանի անատոմիա, ֆիզիոլոգիա և պաթոլոգիա» դասագիրքը գրված է Մանկավարժական համալսարանի հատուկ կրթության բաժնի տիֆլոմանկավարժություն բաժնի ուսանողների համար:

Դասագիրքը ստեղծվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի պրոֆեսոր Հ. Գրիգորյանի, հատուկ կրթության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ազարյանի, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր ակնաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի աչքի հիվանդությունների ամբիոնի վարիչ Ա. Մալայանի և դոցենտ Ե. Մալայանի կողմից:

Առարկայի ծրագրին համապատասխան շարադրված են ինչպես տեսողության օրգանի անատոմիան, ֆիզիոլոգիան, այնպես էլ աչքի հիվանդությունների բոլոր բաժինները, որտեղ վերլուծվում են առանձին հիվանդությունների էթիոլոգիայի, պաթոգենեզի, կլինիկական ախտանիշների, հիվանդության ընթացքի, բուժման և պրոֆիլակտիկային վերաբերող հարցերը, վերլուծված են տեսողության օրգանի փոփոխությունները՝ կապված տարբեր ընդհանուր հիվանդությունների հետ:

Դասագիրքը կազմված է 20 գլուխներից, որտեղ հիվանդությունները ներկայացված են ըստ անատոմիական տեղակայման և զարգացման բնույթի:

Մանրամասն նկարագրված են կոպերի, աչքի լորձաթաղանթի, արցունքատար ուղիների, եղջերաթաղանթի, ոսպնյակի, սկլերայի, անոթաթաղանթի, ցանցաթաղանթի, տեսողական, ակնաշարժ ապարատի և այլ բաժինների հիվանդությունները:

Յուրաքանչյուր գլուխն ավարտվում է ինքնաստուգման հարցերով, իսկ գրքի վերջում ներկայացված է ընդարձակ բացատրական բառարան, որոնք էականորեն կնպաստեն նյութի յուրացմանը:

Գրքում ներկայացված է 90 ֆոտոնկար (վերցված են հեղինակների անձնական արխիվներից և ազատ համացանցից), որոնցում արտացոլված են աչքի անատոմիային, ֆիզիոլոգիային վերաբերող նկարներ, ինչպես նաև տարբեր հիվանդությունների ժամանակ նկատվող աչքի տարբեր մասերին բնորոշ այն փոփոխությունները, որոնք հատուկ են տվյալ հիվանդությանը և էականորեն կնպաստեն տվյալ դասընթացի յուրացմանը:

Գրքի վերջում զետեղված է ընդարձակ բացատրական բառարան, որտեղ բերված են այն տերմինների բացատրությունները, որոնք հանդիպում են տեքստի շարադրանքի մեջ, ինչպես նաև մասնագիտական այլ տերմիններ ևս, որոնց ուսանողները կհանդիպեն այլ լեզուներով մասնագիտական գրականությունից օգտվելիս:

Դասագիրքը նախատեսված է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի տիֆլոմանկավարժության բաժնի ուսանողների, այդ առարկան դասավանդող դասախոսների և ընթերցող լայն հասարակության համար:



ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ



Լույս է տեսել Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի առաջին բուժօգնության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Հակոբ Գրիգորյանի, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դրաստամատ Խուդավերդյանի և նույն ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Տեր-Մարկոսյանի «ՖԻԶԻՈԼՈԳԻԱ» ուսումնական ձեռնարկը:

Բարձր որակավորմամբ ապագա կենսաբանամանկավարժական կադրերի պատրաստումը էականորեն կախված է ոչ միայն առարկայի դասավանդման մակարդակից, ուսումնական պարապմունքների տեխնիկական հագեցվածությունից, այլ նաև ժամանակակից դասագրքերի և ուսումնական ձեռնարկների առկայությունից: Ապագա կենսաբանի, ինչպես նաև հատուկ մանկավարժի, նախադպրոցական մանկավարժի ձևավորումը էականորեն նրանց կողմից ուսումնասիրվող կենսաբանական բնույթի առարկաների հետ, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի «ֆիզիոլոգիա» դասընթացը:

Մանկավարժական բուհերի ուսանողների համար ստեղծված «Ֆիզիոլոգիա» ձեռնարկը ստեղծվել է ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված ծրագրին համապատասխան և համահունչ է դպրոցի «Անատոմիա և ֆիզիոլոգիա» դասընթացի ծրագրին, ինչը չափազանց կարևոր է մանկավարժական մասնագիտական կադրերի պատրաստման առումով: Այն կազմված է հաշվի առնելով ֆիզիոլոգիայի և նրան հարակից գիտությունների արդի նվաճումները: Ուսանողի աշխարհայացքի զարգացման նպատակով դասագրքում տրվել է հայրենական, և արտերկրյա գիտնականների դերը ֆիզիոլոգիայի զարգացման մեջ, ինչպես նաև ֆիզիոլոգիայի զարգացման հիմնական փուլերը: Դասագրքում բերված ֆիզիոլոգիական ֆունկցիաների ցուցանիշները ներկայացված են Միավորների միջազգային համակարգին (ՍԻ) համապատասխան:

Ձեռնարկում շարադրված են մարդու ֆիզիոլոգիայի վերաբերյալ հիմնական հասկացությունները, օրգան համակարգերի զարգացման օնտոգենեզը, ֆունկցիոնալ անատոմիան, նյարդային համակարգի կառուցվածքը:

Յուրաքանչյուր գլուխ ավարտվում է անցած նյութի ամրապնդմանը նվիրված ինքնաստուգման հարցերով, որոնք կնպաստեն ուսանողների տեսական գիտելիքների ամրապնդմանը ու մտածողության զարգացմանը: Այդ գիտելիքների իմացությունը հիմք կհանդիսանա ֆիզիոլոգիայի լաբորատոր և գործնական պարապմունքների արդյունավետ անցկացմանը, ինչն իր հերթին կնպաստի ուսանողների գործնական հմտությունների ձեռք բերմանը: Դասագիրքը բաղկացած է 17 գլուխներից, որոնցում շարադրված են կոնկրետ օրգանի, համակարգի ֆիզիոլոգիական ֆունկցիաները: Այն հարուստ է բազմաթիվ նկարներով, գծապատկերներով, աղյուսակներով և ավարտվում է ֆիզիոլոգիական տերմինների ընդարձակ բացատրական բառարանով: Գրքի վերջում տրված է օգտագործած և հանձնարարվող գրականության ցանկը:

Ձեռնարկը նախատեսված է մանկավարժական բուհերի ուսանողների, կենսաբանների, հատուկ մանկավարժների, այդ առարկան դասավանդող դասախոսների, տվյալ հիմնախնդրով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2018-2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն (առկա ուսուցում)

1. Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ըստ բնագավառների) - ԺԳ.00.02, 1 տեղ

2. Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն) - ԺԹ.00.03, 1 տեղ

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

4) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և ,IELTSե (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը.

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը.

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

3. Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:

4. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է հաստատության մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ հանձնաժողովի կողմից և հաստատվում է հաստատության ղեկավարի կողմից:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հունիսի 27-ը (ներառյալ):

Ընդունելության քննությունները կազմակերպվում են 2018 թ. հունիսի 28-ից մինչև հուլիսի 3-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 14.06. 2018 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ